

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ուսումնառական ձեռնարկ
Նախադպրոցական և տարրական դասարանների սովորողների հետ
աշխատող մանկավարժների համար

(վերահրատարակություն)

ՀՏԴ 372. 8
ԳՄԴ 74. 26
Ա 583

- Հեղինակ՝ **Քրիստինե Անդրեասյան**
«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, «Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր 2»-ի, դասընթացների և զարգացման գծով պատասխանատու
- Մասնագիտական խմբագիր **Անուշ Ալեքսանյան**
Կրթության ազգային ինստիտուտ, մանկավարժական կադրերի վերապատրաստման և ատեստավորման բաժնի մասնագետ
- Խորհրդատուներ՝ **Իռեն Սարգսյան**
«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, ծրագրերի իրականացման գծով ղեկավար
- Մերգեյ Սահակյան**
«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության «Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր 2»-ի ղեկավար
- Ձևավորող՝ **Նունե Սարգսյան**
«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, ՏՏ համակարգող
- Ա 583 Աղետների ռիսկի նվազեցման կրթություն: Անդրեասյան Ք., Ուսումնաօժանդակ ձեռնարկ նախադպրոցական և տարրական դասարանների սովորողների հետ աշխատող մանկավարժների համար /Ք. Անդրեասյան, Եր.: Սեյվ դը չիլդրեն, - 2015 46 էջ

Սույն ձեռնարկը մշակվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր 2»-ի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO) կողմից: Սույն հրատարակման մեջ արտահայտված տեսակետները կարող են չարտացոլել Եվրոպական հանձնաժողովի տեսակետները:

ՀՏԴ 372. 8
ԳՄԴ 74. 26

ISBN 978-9939-1-0111-8
© Save the children, 2014

համաձայնագրի մասին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 486 - Ե/Բ

21. Եպրիլ 2015

«ՍԵՅՎ ԴԸ ԶԻՆԴՐԵՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԵԱԿԱՄ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԸ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի և
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն
իրավանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

«Աղետների ռիսկի նվազեցման կրթություն» ծրագրի շրջանակում «Սեյվ ԴԸ Զիլդրեն»
կազմակերպության կողմից մշակված՝ «Աղետների ռիսկի նվազեցման կրթություն,
ուսումնառական ծեղնարկը նախադրյալական և տարրական դասարանների
երեխաների հետ աշխատող մանկավարժների համար» և «Աղետների ռիսկի նվազեցման
կրթություն. ուղեցույցը հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող
մանկավարժների համար» երաշխավորել գործածության որպես ուսումնառական կյուրս
մինչև 2018 թվականը:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Բովանդակություն

Նախաբան	5
Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կրթություն. ԱՌՆ ներառական կրթություն	6
ԱՌՆ հիմնական տերմիններ	6
Ներածություն	7
Ծանոթացում	8
Խաղ. «Ինչ է երկրաշարժը»	9
Խաղ-փազլ «Երկրաշարժ»	11
Խաղ-փազլ. «Ճիշտ և սխալ. ինչ անել երկրաշարժի ժամանակ»	12
Խաղ- փազլ. «Ճիշտ և սխալ. ինչպես կանխել հրդեհի առաջացումը»	18
Խաղ - փազլ «Ճիշտ և սխալ. ինչ անել հրդեհի ժամանակ».....	20
Խաղ- փազլ «Ճիշտ և սխալ. ինչ չի կարելի անել հրդեհի ժամանակ».....	23
Լրացնել «Ուրախ հարցաշարը»	25
Պաստառ 19. «Ինչ անել երկրաշարժի ժամանակ»	25
Պաստառ 20. «Ինչ անել երկրաշարժից հետո».....	26
Պաստառ 21. «Ինչպես կանխել հրդեհի առաջացումը»	27
Պաստառ 22. «Ինչ անել հրդեհի ժամանակ».....	28
Պաստառ 23 . «Ինչ չի կարելի անել հրդեհի ժամանակ».....	29
Փոքրիկ պատմություն բեմականացման կամ տիկնիկային ներկայացման համար	31
«Ինչ պատահեց, երբ Տիգրանը, Լուսինեն, Քուչոն և Կոկոն որոշեցին զվարճանալ»	31
Ինչ է կլիմայի փոփոխությունը*	33
Ինչպես բացատրել երեխաներին, որն է ջերմոցային էֆեկտը, գլոբալ տաքացումը և կլիմայի փոփոխությունը.....	35
Առաջադրանք. Ինչպես խնայել ռեսուրսները	36

Նախաբան

2012 թվականի սեպտեմբերին «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը «Աղետների ռիսկի նվազեցման» (ԱՌՆ) ներառական ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել էր Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO) կողմից, ստեղծեց ուսումնառական նյութ՝ ուղեցույց-ձեռնարկ մանկավարժների համար, խաղ-գրքույկ երեխաների համար, ձայնասկավառակ՝ «Պատրաստված լինենք աղետներին» խորագրով՝ մշակված գերմանական Ա-Էս-Բե (ASB) կազմակերպության կողմից տրամադրված նյութի հիման վրա, որոնք նախատեսված էին հանրակրթական հատուկ դպրոցների և ներառական կրթություն իրականացնող դպրոցների մանկավարժների և **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** (ԿԱՊԿՈՒ) երեխաների համար:

2014 թվականի մայիսին «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը «Աղետների ռիսկի նվազեցման» (ԱՌՆ) ներառական ծրագիր 2-ի շրջանակներում, որը կրկին ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO) կողմից, ուսումնասիրություն կատարեց Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու և Երևանի 20 ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, 21 նախակրթարաններում և 21 հատուկ ու գիշերօթիկ հաստատություններում, որոնք նախկին ծրագրի թիրախ հաստատություններն էին: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ընտրված 62 թիրախ հաստատություններում սովորում են 13654 աշակերտ, որոնցից 2394-ը ունեն հաշմանդամություն: Բացի այդ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 41 հաստատությունից միայն 23-ն են ԱՌՆ կրթություն անցել և այդ 23 հաստատություններից միայն 9-ում է, որ կան ԱՌՆ համապատասխան կրթական նյութեր, որոնք տրամադրվել են Հայկական Կարմիր Խաչի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՀ ՏԿԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը «Աղետների ռիսկի նվազեցման» ներառական ծրագիր 2-ի շրջանակներում, որոշեց նախորդ ծրագրի շրջանակներում ստեղծած ուսումնական նյութը, որը նախատեսված էր հանրակրթական հատուկ դպրոցների մանկավարժների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների համար, հարմարեցնել, լրամշակել ինչպես ներառական կրթություն իրականացնող դպրոցների մանկավարժների, այնպես էլ նախադպրոցական և տարրական դասարանների աշակերտների և նրանց հետ աշխատող մանկավարժների համար: Նյութը լրամշակելիս հաշվի է առնվել ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կարծիքը և դիտարկումները, որոնք արվել էին նախորդ ծրագրի շրջանակներում ստեղծված նյութի շուրջ: Ինչպես նաև հաշվի ենք առել նախորդ ծրագրի շրջանակներում թիրախ հաստատություններում աշխատող հատուկ մանկավարժների, դաստիարակների կարծիքը, ովքեր մեկ տարի փորձնական աշխատել էին այդ կրթական նյութերով: Այդ կարծիքը ունենալու համար «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը «Աղետների ռիսկի նվազեցման» ներառական ծրագիր 2-ի շրջանակներում կատարեց ԱՌՆ կրթական նյութի արդյունավետության գնահատման ուսումնասիրություն:

Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կրթություն. ԱՌՆ ներառական կրթություն

Համաձայն Հայաստանի Հանրապետության 1996թ. «Երեխաների իրավունքների մասին» օրենքի, յուրաքանչյուր երեխա ունի կյանքի, առողջության, կրթության, անվտանգության ապահովման իրավունք (<http://parliament.am/>): Հաշվի առնելով այդ ամենը՝ կարևորում ենք երեխաների ԱՌՆ կրթությունը: ԱՌՆ կրթության նպատակն է երեխաներին, նրանց հետ աշխատող մանկավարժներին, նրանց ծնողներին, խնամակալներին, դայակներին ու դաստիարակներին, ինչպես նաև համայնքին հասանելի դարձնել աղետների և դրանց դիմակայելու վերաբերյալ տեղեկություններ, ձևավորել գործնականում այդ գիտելիքները կիրառելու հմտություններ և կարողություններ: Իսկ ԱՌՆ ներառական կրթության նպատակն է ԿԱՊԿՈՒ երեխաներին զինել աղետներին դիմակայելու համար տարրական գիտելիքներով ու հմտություններով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշումը. հանրակրթական պետական չափորոշիչների, 2-րդ գլխի՝ հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները, 7-րդ կետի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթական ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր կարողություններին (<http://www.aniedu.am/>):

ԱՌՆ հիմնական տերմիններ

Աղետ-հանկարծակի տեղի ունեցող իրադարձություն է, որը լրջորեն խաթարում է հասարակության, համայնքի կենսագործունեությունը՝ առաջացնելով մարդկային, նյութական, տնտեսական, բնապահպանական վնասներ, որոնց հաղթահարման ժամանակ ազդակիր (ազդեցությունը կրող) հասարակության կամ համայնքի կարողությունը (օգտագործել սեփական ռեսուրսները) բավարար չէ:

Վտանգ – բնական կամ մարդածին երևույթ, որը կարող է հանգեցնել աղետի:

Խոցելիություն –խոցելիությունը վտանգից անպաշտպանվածությունն է: Վտանգի ազդեցությունից անպաշտպան կարող են լինել մարդիկ, կենդանիները, շենքերը, շինությունները, տեխնոլոգիաները, օբյեկտները, տարածքները (ցամաքային, ջրային, օդային), բույսերը և այլն:

Ռիսկ –Որևէ տարածքում, ինչ-որ ժամանակ աղետների հավանականությունը կամ հնարավորությունը, ինչպես նաև աղետների հետևանքով առաջացող հնարավոր կորուստները՝ մարդկային կյանքը, առողջությունը, կենսապահովման միջոցները, ունեցվածքը, հասարակական ծառայությունները:

Կարողություն-մարդկանց, համայնքի, հասարակության աղետին դիմակայելու և դրա ազդեցությանը դիմադրելու ռեսուրսները, հնարավորությունները:

Մեղմացում –նախօրոք ձեռնարկված միջոցառումներ աղետի կամ վտանգների բացասական ելքերը նվազեցնելու կամ սահմանափակելու համար:

Պատրաստվածություն-աղետներին արդյունավետ դիմակայելու կարողություններ կամ նախօրոք ձեռնարկված միջոցառումներ: Այն իր մեջ ներառում է վտանգի մասին ժամանակին և արդյունավետ ազդարարում, ինչպես նաև վտանգավոր վայրից անվտանգ վայր մարդկանց և նրանց գույքի ժամանակին տարահանում և տեղափոխում:

Գանիստ – Վտանգ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում, բացառել վտանգի առաջացումը: Նաև նախօրոք ձեռնարկված միջոցառումներ, որոնք օգնում են խուսափել վտանգների և նրանցից բխող աղետների բացասական ազդեցությունից:

Ներածություն

Հաշվի առնելով, որ հանրակրթական դպրոցներում համապատասխան առարկաների շրջանակներում (Կյանքի հմտություններ, Ես և շրջակա աշխարհը, ՆԶՊ և այլն) ուսուցանվում է աղետների ռիսկի նվազեցմանը (ԱՌՆ) նպաստող վարքականոններ, որի համար կան դասագրքեր, ուստի այս ձեռնարկը և նրան կից ուսումնական նյութերը (պաստառներ, խաղեր, ձայնասկավառակ՝ «Պատրաստված լինենք աղետներին», մուլտֆիլմ) նպատակ չունեն փոխարինելու դասագրքերին, այլ նրանք կարող են լինել միայն օժանդակ, լրացուցիչ նյութ ԱՌՆ վարքականոններ ուսուցանելիս, ինչպես տարրական դասարանների, այնպես էլ նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող մանկավարժների/դաստիարակների համար: Բացի այդ այն կարող է օգնել մանկավարժներին ԿԱՊԿՈՒ երեխաներին ուսուցանել ԱՌՆ թեմաները և նրանց համապատասխան վարքականոնները:

Այս ուսումնաօժանդակ ձեռնարկում աղետները կներկայացնենք հիմնականում մեծ պաստառների տեսքով: Բացի այդ մանկավարժներին/դաստիարակներին առաջարկում ենք, որ յուրաքանչյուր երեխա ունենա իր աշխատանքային տետր-ալբոմը, որը սովորական նկարչական ալբոմ կարող է լինել, որի նպատակն է, որպես ստուգիչ աշխատանք, երեխաները կատարեն ինքնուրույն առաջադրանքներ՝ նկարչություն, ապլիկացիա (կտրել-փակցնել) և այլ առաջադրանքներ, որոնք կնպաստեն ԱՌՆ ուսուցանվող նյութը սովորելուն և ամրապնդելուն: Կներկայացնենք նաև մի քանի հետաքրքիր խաղ-առաջադրանքներ, որոնք նույնպես կօգնեն մանկավարժներին/դաստիարակներին երեխաներին գործնականորեն ուսուցանել ԱՌՆ որոշ թեմաներ: Որպես օրինակ՝ կառաջարկենք նաև մի փոքրիկ պատմություն՝ թատերականացման կամ տիկնիկային բեմականացման համար, որի բովանդակությունը մանկավարժը/դաստիարակը կարող է փոփոխել՝ ըստ ուսուցանվող ԱՌՆ թեմայի: Նշված առաջարկություններից բացի՝ մանկավարժը/դաստիարակը կարող է դրսևորել նորանոր ստեղծագործական մտահաղացումներ՝ հիմք ընդունելով առաջարկված խաղ-առաջադրանքները: Կներկայացնենք յուրաքանչյուր պաստառի ավելի մանրամասն բացատրությունը:

Ծանոթացում

Կան մարդուկի նկարներով երկու պաստառներ՝ մեկը **Հերոսն է** (պաստառ 1), իսկ մյուսը՝ **Փորձանքիկն է** (պաստառ 2): **Հերոսին**՝ մանկավարժի/դաստիարակի ուղղորդմամբ, երեխաները կկոչեն որևէ անունով, իսկ **Փորձանքիկին** անուն չեն տա, որպեսզի ավելի պարզ լինի՝ ինչ է աղետը (այս դեպքում՝ երկրաշարժը և հրդեհը): Պաստառներն իրենց վրա ունեն գրպաններ: Պաստառ 1-ի գրպանները կրում են **Երկրաշարժիկ** և **Հրդեհիկ** անվանումները՝ պատկերված համապատասխան նկարներով՝ **Գլոբուսե փորիկով մարդուկ**, որը նույն **Երկրաշարժիկն է** և **Կրակե փորիկով մարդուկ**, որը **Հրդեհիկն է**:

Իսկ պաստառ 2-ի գրպանները կրում են «**Երկրաշարժիկի վարքականոններ**» և «**Հրդեհիկի վարքականոններ**» անվանումները, որոնց վրա նույնպես պատկերված են համապատասխան նկարներ՝ **Գլոբուսե փորիկով մարդուկ** և **Կրակե փորիկով մարդուկ**: Պաստառ 1-ի գրպանների մեջ հետագայում կդրվեն այն խաղերը, որոնց օգնությամբ երեխաները կսովորեն, թե ինչ է երկրաշարժը և ինչ է հրդեհը, իսկ պաստառ 2-ի գրպանների մեջ՝ այն խաղերը, որոնց օգնությամբ երեխաները կսովորեն, թե ինչպես իրենց պահեն երկրաշարժի և հրդեհի ժամանակ:

Անհրաժեշտ նյութեր.

- կոճգամ
- պաստառ 1
- պաստառ 2

Խաղի ընթացքը: Երկու մարդուկների պաստառները կոճգամով ամրացնել դասասենյակի/խմբասենյակի այն մասում, որը հասանելի և մատչելի է երեխաների համար: Մանկավարժը/դաստիարակը բացատրում է. «**Հերոսը** այն **Մարդուկն է**, ով ունի **Փորձանքիկ** անունով ընկեր, ով շատ է սիրում խաղալ հետաքրքիր խաղեր, սակայն դրանց ժամանակ ոչ միշտ է զգույշ լինում և երբեմն վնասվում և վնասում է: Նախ կծանոթանանք **Փորձանքիկի** հետաքրքիր խաղերից երկուսին՝ «**Երկրաշարժիկ**» և «**Հրդեհիկ**», իսկ հետո **Հերոս-մարդուկը** կօգնի սովորել՝ ինչպես մեզ ճիշտ պահենք այդ խաղերի ժամանակ և այն ավարտելուց հետո: Իսկ նրանց վրայի գրպաններն անհրաժեշտ են, որ խաղերը, որոնց օգնությամբ կսովորենք այդ ամենը, պահենք այնտեղ»: (Մանկավարժը/դաստիարակը, հիմք ընդունելով առաջարկվածը, իր խոսքը կարող է ըստ իր հայեցողության կառուցել՝ ելնելով երեխաների կարողություններից):

Խաղ. «Ինչ է երկրաշարժը»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ
- պաստառ 3՝ **Երկրաշարժիկի** նկարը և պաստառ 4՝ **Երկրաշարժիկի** ուժգնությանը համապատասխան փոքր քարտ-նկարները

Խաղի նպատակը: Երեխաները կիմանան, թե ինչ է երկրաշարժը, և ինչ կարող է պատահել երկրաշարժի ժամանակ:

Խաղի ընթացքը և պաստառների բովանդակությունը- Պաստառ 3-ի վրա պատկերված է գլոբուսն փոքրիկով մարդուկի՝ **Երկրաշարժիկի** 6 նկար: Դա երկրաշարժն է՝ իր տարբեր ուժգնությամբ՝ 2-10 բալ: Ամեն մի ուժգնության կողքին հաստ եզրագծերով առանձնացված են տեղեր՝ գրպաններ, որտեղ պետք է դրվեն **Երկրաշարժիկի** ուժգնությանը համապատասխան փոքր քարտ-նկարները՝ **պաստառ 4-ի** նկարները: Մանկավարժը/դաստիարակը երեխաներին պատմում է, որ **Երկրաշարժիկը** շատ է սիրում պարել (մանկավարժը/դաստիարակը կարող է յուրաքանչյուր պարին անուն տալ կամ թողնել, որ երեխաները իրենք անուն տան, որպեսզի նրանք պարը և ուժգնությունները զուգորդելով միմյանց հետ մտապահելով սովորեն՝ ինչ է երկրաշարժը և ինչ կարող է պատահել, երբ այն տեղի է ունենում), որի ժամանակ զանազան բաներ են կատարվում: Այսպես՝

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 1-ին՝ 2-3 բալ:

Երկրաշարժիկը իր առաջին պարի ժամանակ շարժում է միայն փոքրիկը: Այս երկրաշարժը զգում են միայն հողի տակ քնած կենդանիները, օրինակ՝ խլուրդները (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ հողի տակ քնած կենդանի**, պաստառ 4, նկար 1):

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 2-րդ՝ 4 բալ:

Երկրաշարժիկը կարող է շարունակել իր պարը և այս անգամ փոքրիկի հետ միաժամանակ շարժել նաև ձեռքերը, որի ժամանակ դասասենյակի/խմբասենյակի պահարանի մեջ դրված զրքերը կամ պահարանի ապակիները կսկսեն շարժվել (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դասասենյակի պահարանը զրքերով**, պաստառ 4, նկար 2): Իսկ եթե տանն ենք, ապա կտեսնենք, որ շարժվում է նաև պահարանի մեջ դրված սպասքը (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ տան պահարանը սպասքով** պաստառ 4, նկար 3): Թե՛ տանը և թե՛ դպրոցում/մանկապարտեզում կտեսնենք, որ շարժվում են պատուհանի ապակիները (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ պատուհան**, պաստառ 4, նկար 4):

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 3-րդ՝ 5 բալ:

Երկրաշարժիկը, ոգևորվելով իր պարից, շարունակում է այն՝ փոքրիկի, ձեռքերի հետ միաժամանակ շարժելով նաև ոտքերը, որի ժամանակ, եթե դպրոցում/մանկապարտեզում հանգիստ նստած լինենք, անպայման կզգանք երկրաշարժը (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դասասենյակում նստած աշակերտ**, պաստառ 4, նկար 5): Իսկ եթե տանը քնած լինենք, ապա կզարթնենք (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ տանը քնած**, պաստառ 4, նկար 6): Թե՛ տանը և թե՛ դպրոցում/մանկապարտեզում առաստաղից կախված ամեն ինչ կսկսի շարժվել (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դասասենյակում և տանը առաստաղից կախված ջահ**, պաստառ 4, նկար 7):

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 4-րդ՝ 6 բալ:

Երկրաշարժիկի ոգևորված պարը շարունակվում է, և այս անգամ նա փորիկի, ձեռքերի և ոտքերի հետ միաժամանակ սկսում է շարժել նաև գլուխը: Այդ ժամանակ, եթե լինենք դասարանում/խմբասենյակում, անպայման բոլորս կզգանք այն, անգամ այն դեպքում, եթե քայլելիս, վազելիս կամ նստած լինենք (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դասասենյակում կամ դպրոցում վազող, քայլող կամ նստած աշակերտ**, պաստառ 4, նկար 8): Իսկ եթե լինենք տանը, ապա թե՛ քնած, թե՛ խոհանոցում եղած ժամանակ, թե՛ սենյակում խաղալիս, ուր էլ լինենք, ինչ էլ անելիս լինենք, կզգանք այն (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ տանը քնած, խոհանոցում ճաշ եփող մայրիկ, սենյակում խաղացող երեխա**, պաստառ 4, նկար 9): Բացի այդ՝ թե՛ տանը և թե՛ դպրոցում/մանկապարտեզում պատից կախված նկարները կամ առարկաները կընկնեն (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ պատից կախված նկարը ընկնում է ցած**, պաստառ 4, նկար 10): Թե՛ տանը, թե՛ դպրոցում/մանկապարտեզում հատակը կշարժվի (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դասասենյակի կամ տան հատակ**, պաստառ 4, նկար 11):

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 5-րդ՝ 7-8 բալ:

Երկրաշարժիկը շարունակում է պարը, և նա այս անգամ ավելի ու ավելի ուժեղ է շարժում ձեռքերը, ոտքերը, փորիկը և գլուխը, որի ժամանակ դպրոցում/մանկապարտեզում լինենք, թե՛ տանը, կլսենք դղրոյուն, շենքերը կհսով չափ կսկսեն քանդվել (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դպրոցի, տան կիսաքանդված շենքեր**, պաստառ 4, նկար 12): Բացի այդ, կտեսնենք, որ թե՛ տան և թե՛ դպրոցի/մանկապարտեզի չքանդված պատերն ունեն մեծ-մեծ ձեղքեր, (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ մեծ ձեղքեր դպրոցի, տան պատերին**, պաստառ 4, նկար 13):

Պաստառ 3, Երկրաշարժիկի նկար 6-րդ՝ 9-10 բալ:

Երկրաշարժիկի պարը է՛լ ավելի ու ավելի է ուժեղանում: Նա ավելի ու ավելի ուժեղ և անկազմակերպ է շարժում ձեռքերը, ոտքերը, փորիկը և գլուխը: Այս ժամանակ բոլոր շենքերը, դպրոցները/մանկապարտեզները քանդվում են ամբողջությամբ (**համապատասխան փոքր քարտ-նկար՝ դպրոց, շենքեր՝ ամբողջությամբ քանդված**, պաստառ 4, նկար 14):

Պատրաստման եղանակը: Մանկավարժը/դաստիարակը նախապես **պաստառի**

3-ի վրա հաստ եզրագծերով առանձնացված տեղերը՝ գրպանները, մկրատի կամ բարակ կտրող գործիքի օգնությամբ զգուշությամբ բացում է, իսկ **պաստառ 4-ի** նկարները (եթե նպատակահարմար է գտնում) երեխաների հետ միասին կտրում և առանձնացնում է:

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը սկսում է պատմել **գլոբուսե փորիկով մարդուկի՝ Երկրաշարժիկի** և նրա պարերի ուժգնության մասին: Որից հետո նա **պաստառ 3-ի** վրա հերթով ցույց է տալիս **Երկրաշարժիկի** 6 նկարները և նրանց արդեն կտրած-պատրաստած **համապատասխան փոքր քարտ-նկարները**: Այնուհետև **մանկավարժը/դաստիարակը** դասարանը/խումբը բաժանում է **4-5** հոգանոց խմբերի: Խմբերին հանձնարարում է, հիշելով ուսուցչի/դաստիարակի պատմածը, սեղանին դասավորել **քարտ-նկարներն** ըստ երկրաշարժի ուժգնության աստիճանի: Երեխաները պիտի հիշեն կամ պարզապես տրամաբանորեն դուրս բերեն, թե ինչ տեղի կունենա շատ թույլ երկրաշարժի դեպքում, իսկ ինչ տեղի կունենա ավելի ուժեղ երկրաշարժի ժամանակ: Ապա նա խմբերին հանձնարարում է և հետևում կամ ուղղորդում, որ նրանք **համապատասխան փոքր քարտ-**

նկարները տեղադրեն **պաստառ 3-ի** համապատասխան գրպաններում: Յուրաքանչյուր խմբից մեկ երեխա մոտենում է և բացում փոքր քարտ-նկարներից մեկը, պատմում նկարի մասին և տեղադրում պաստառ 3-ի վրա՝ իրեն համապատասխան տեղում: Այն խումբը, ում կհաջողվի ավելի շատ ճիշտ պատասխան տալ, կհամարվի հաղթող:

Խաղ-փազլ «Երկրաշարժ»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ
- պաստառ 5՝ **Երկրաշարժիկի** նկարը և պաստառ 6՝ երկրաշարժի ուժգնությունը բնութագրող համապատասխան նկարները

Խաղի նպատակը: Երեխաները կիմանան, թե ինչ է երկրաշարժը, և որոնք են նրա հետևանքները:

Պաստառների բովանդակությունը: **Պաստառ 5-ի** կենտրոնում պատկերված է **Երկրաշարժիկի** նկարը, իսկ պաստառի մյուս հատվածում կա փազլի 14 կտորի համար նախատեսված գրպաններ, որտեղ ըստ հերթականության պետք է դրվեն փազլի կտորները, այսինքն՝ երկրաշարժի ուժգնությունը բնութագրող համապատասխան նկարները՝ **պաստառ 6-ի** նկարները: Դրանք են՝

- նկար 15-ը՝ **հողի տակ քնած կենդանի,**
- նկար 16-ը՝ **դասասենյակի/խմբասենյակի պահարանը գրքերով,**
- նկար 17-ը՝ **տան պահարանը սպասքով,**
- նկար 18-ը՝ **պատուհան,**
- նկար 19-ը՝ **դասասենյակում/խմբասենյակում նստած աշակերտ,**
- նկար 20-ը՝ **տանը քնած երեխա,**
- նկար 21-ը՝ **դասասենյակում/խմբասենյակում և տանը առաստաղից կախված ջահ,**
- նկար 22-ը՝ **դասասենյակում/խմբասենյակում կամ դպրոցում/մանկապարտեզում վազող, քայլող կամ նստած աշակերտ,**
- նկար 23-ը՝ **տանը քնած երեխա, խոհանոցում ճաշ եփող մայրիկ, սենյակում խաղացող, վազող, քայլող կամ նստած երեխա,**
- նկար 24-ը՝ **կախված նկարն ընկնում է ցած,**
- նկար 25-ը՝ **դասասենյակի/խմբասենյակի կամ տան հատակ,**
- նկար 26-ը՝ **դպրոցի/մանկապարտեզի, տան կիսաքանդ շենքեր,**
- նկար 27-ը՝ **մեծ ճեղքեր դպրոցի/մանկապարտեզի, տան պատերին,**
- նկար 28-ը՝ **դպրոցի/մանկապարտեզի, տան ամբողջությամբ քանդված շենքեր:**

Ինչպես նախորդ խաղի ժամանակ, այնպես էլ այս խաղի ժամանակ մանկավարժը/դաստիարակը երեխաներին պատմում է **Երկրաշարժիկի** և նրա պարերի մասին (տե՛ս էջ 9-10-ը նախորդ խաղի բովանդակության հատվածը):

Պատրաստման եղանակը: Մանկավարժը/դաստիարակը նախապես **պաստառ 5-ի** վրա առանձնացված փազլի կտորների տեղերը՝ գրպանները, մկրատի կամ բարակ կտրող գործիքի օգնությամբ զգուշությամբ բացում է, իսկ **պաստառ 6-ի** նկարները (եթե նպատակահարմար է գտնում) երեխաների հետ միասին կտրում և առանձնացնում է: (Նույն կերպ վարվել նաև մյուս խաղերի պաստառների կիրառման ժամանակ):

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը սկսում է պատմել **Երկրաշարժիկի** և նրա պարերի ուժգնության մասին: Որից հետո նա ցույց է տալիս **պաստառ 5-ը** և հարցնում երեխաներին, թե ով է այնտեղ պատկերված: Ապա հերթով ցույց է տալիս **պաստառ 6-ի** նկարները ու տեղադրում **պաստառ 5-ի** վրա իրենց համապատասխան տեղերում: Երբ երեխաները լավ կյուրացնեն խաղի բովանդակությունը, ապա մանկավարժը/դաստիարակը կարող է այն կազմակերպել մրցույթի ձևով: Դասարանը կամ խումբը բաժանում է երկու խմբի: Յուրաքանչյուր խմբին տալիս է **պաստառ 6-ի** նկարները հավասար քանակությամբ: Ապա հանձնարարում, որ յուրաքանչյուր խմբից երեխաները հերթով վերցնեն նկարները և տեղադրեն **պաստառ 5-ի** համապատասխան տեղերում: Այն խումբը, ում կհաջողվի ավելի արագ և ճիշտ կատարել առաջադրանքը, կհամարվի հաղթող:

Խաղ-փազլ. «Ճիշտ և սխալ. ինչ անել երկրաշարժի ժամանակ»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ
- պաստառ 7՝ **Երկրաշարժիկի** նկարը, պաստառ 8՝ երկրաշարժի ժամանակ ճիշտ և սխալ վարքի նկարները

Խաղի նպատակը: Երեխաները կիմանան երկրաշարժի ժամանակ ճիշտ և սխալ վարքի մասին, կկարողանան այդպես վարվել երկրաշարժի ժամանակ՝ խուսափելով սխալ վարքից:

Պաստառների բովանդակությունը: **Պաստառ 7-ի** կենտրոնում պատկերված է արդեն մեզ ծանոթ **Երկրաշարժիկի** նկարը, որի երկու կողմերում կան զրպաններ: Պաստառ 8-ի վրա պատկերված են 8 զույգ իրավիճակներ և վարքի ձևեր, որոնց մի մասը սխալ է, իսկ մյուս մասը ճիշտ:

Պաստառ 8, նկար 29

Ճիշտ վարք: Երկրաշարժի ժամանակ պետք է պահպանել հանգստություն և խուճապի չմատնվել, որպեսզի լսես՝ ինչ է ասում ուսուցիչը/դաստիարակը:

Պաստառ 8, նկար 29ա

Սխալ վարք: Երկրաշարժի ժամանակ կարելի է գոռալ, հրել վազել, թեկուզև վնասես ընկերոջդ:

Պաստառ 8, նկար 30

Ճիշտ վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի/մանկապարտեզի բարձր հարկում (երկրորդից բարձր), ապա պետք է արագ մտնես սեղանի տակ, պինդ բռնես սեղանի ոտքից, և մինչև երկրաշարժի վերջանալը՝ մնաս սեղանի տակ, որ չվնասվես:

Պաստառ 8, նկար 30ա

Սխալ վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի/մանկապարտեզի բարձր հարկում (երկրորդից բարձր), ապա արագ պետք է դուրս փախչես օգտվելով աստիճանավանդակից կամ վերելակից:

Պատասխան 8, նկար 31

Ճիշտ վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի/մանկապարտեզի բարձր հարկում (երկրորդից բարձր) և մոտիկ սեղան չկա, ապա գլուխդ պետք է փակես որևէ հաստ իրով և կանգնես սենյակի ներսի անվտանգ տեղում՝ օրինակ՝ հիմնական (կրող) պատերի տակ: (Ուսուցիչը/դաստիարակը նախօրոք պետք է երեխաներին ցույց տա և վարժեցնի, որ նրանք շատ լավ իմանան դասասենյակի/խմբասենյակի ամենաապահով տեղերը):

Պատասխան 8, նկար 31ա

Միայն վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի բարձր հարկում (երկրորդից բարձր) և մոտիկ սեղան չկա, ապա, գլուխդ առանց ծածկելու որևէ կոշտ առարկայով, կանգնում ես որևէ պատի մոտ:

Պատասխան 8, նկար 32

Ճիշտ վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի/մանկապարտեզի առաջին կամ երկրորդ հարկերում, ապա պետք է արագ դուրս գաս շենքից՝ գրքով կամ պայուսակով/ամուր իրով ծածկելով գլուխդ և, հետևելով տարհանման ուղղորդող նշաններին, գնաս բաց, ապահով տարածք:

Պատասխան 8, նկար 32ա

Միայն վարք: Եթե գտնվում ես տան կամ դպրոցի/մանկապարտեզի առաջին կամ երկրորդ հարկում, ապա պետք վազես պատշգամբ և օգնություն կանչես կամ արագ դուրս գաս շենքից՝ առանց գլուխդ ծածկելու:

Պատասխան 8, նկար 33

Ճիշտ վարք: Երկրաշարժի ժամանակ պետք է հեռու մնաս պատուհաններից, դրսի դռնից և այն ամենից, ինչը կարող է փլվել և վնասել քեզ:

Պատասխան 8, նկար 33ա

Միայն վարք: Երկրաշարժի ժամանակ պետք է վազես անմիջապես դեպի պատուհանը կամ դրսի դուռը:

Պատասխան 8, նկար 34

Ճիշտ վարք: Երբ երկրաշարժը դադարում է, պետք է լսես ուսուցչին, թե ինչ է քեզ ասում: Առանց խուճապի, առանց միմյանց հրելու, իրար հետևից արագ դուրս գաս շենքից՝ գրքով կամ պայուսակով/ամուր իրով ծածկելով գլուխդ և պետք է օգնես մյուսներին (Եթե դասարանում կամ խմբում կան ԿԱՊԿՈՒ երեխաներ, ապա մյուս երեխաները պետք է նախապես իմանան, թե ով ում է օգնելու):

Պատասխան 8, նկար 34ա

Միայն վարք: Երբ երկրաշարժը դադարում է, ապա պետք չէ ուսուցչին լսել: Դուրս փախիր շենքից՝ վազելով, հրելով մյուսներին:

Պատասխան 8, նկար 35

Ճիշտ վարք: Երբ երկրաշարժը դադարում է, և դու այդ ժամանակ գտնվում ես տանը, ապա տնից դուրս գալուց առաջ պետք է անպայման հագնես կոշիկներդ և ծածկես գլուխդ գրքով կամ մի այլ ամուր իրով, որ ճանապարհին կոտրված ապակի կամ այլ կոտրված իրեր չվնասեն ոտքերդ, և կիսաքանդ պատի քարերը թափվելիս չվնասեն գլուխդ:

Պաստառ 8, նկար 35ա

Մխալ վարք: Երբ երկրաշարժը դադարում է, իսկ այդ ժամանակ դու գտնվում ես տանը, ապա կարող ես տնից դուրս գալ միայն գուլպաներով, ոտաբոբիկ և առանց գլուխդ ծածկելու:

Պաստառ 8, նկար 36

Ճիշտ վարք: Երկրաշարժի ժամանակ եթե դրսում ես, ապա երբեք չպետք է շենքի մոտ մնաս կամ վազես տուն, որ վերցնես քո սիրած խաղալիքը կամ որևէ իր. շենքը կարող է քանդվել և քեզ վնասել:

Պաստառ 8, նկար 36ա

Մխալ վարք: Երկրաշարժի ժամանակ, եթե դրսում ես, պետք է վազես մի որևէ պատի մոտ և պատսպարվես կամ ավելի լավ է ներս վազես շենք, քանի որ այնտեղ մոռացել ես քո սիրելի խաղալիքը կամ որևէ իր:

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը պատմում է **Երկրաշարժիկի** պարերի ժամանակ ճիշտ և սխալ վարքի կանոնների մասին: Այնուհետև ցույց է տալիս ճիշտ և սխալ վարքի նկարները մեկ առ մեկ և երեխաներին հարցնում, թե ի՞նչ է պատկերված, կարելի՞ է այդպես վարվել, թե՞ ոչ և ինչու: Ապա հարցնում երեխաներին. «Ի՞նչ եք կարծում, նկարը ո՞ր գրպանը պետք է դնել», որից հետո երեխաները ինքնուրույն կամ մանկավարժի/դաստիարակի օգնությամբ նկարները տեղադրում են **պաստառ 7-ի** համապատասխան գրպաններում: Այնուհետև մանկավարժը/դաստիարակը դասարանը կամ խումբը բաժանում է երկու խմբի՝ խմբերից յուրաքանչյուրին տալով 4-ական ճիշտ և սխալ վարքի նկարները: Ապա հանձնարարում է, որ երեխաները նկարները տեղադրեն իրենց համապատասխան գրպաններում: Այն խումբը, ով ճիշտ և արագ կկատարի առաջադրանքը, նա էլ կհամարվի հաղթողը:

Խաղ-փազլ. «Ճիշտ և սխալ. ինչ պետք է անել երկրաշարժից հետո»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ,
- պաստառ 9՝ **Երկրաշարժիկի** նկարները և պաստառ 10՝ երկրաշարժից հետո ճիշտ և սխալ վարքի նկարներ

Խաղի նպատակը: Երեխաները կիմանան երկրաշարժից հետո ճիշտ և սխալ վարքականոնները:

Պաստառների բովանդակությունը: Պաստառ 9-ի կենտրոնում պատկերված է մեզ ծանոթ **Երկրաշարժիկի** նկարը, որի երկու կողմերում կան 8 զույգ գրպաններ, որոնք նախատեսված են **պաստառ 10-ի** նկարների համար:

Պաստառ 10, նկար 37

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո պետք է պահպանել հանգստություն և խուճապի չմատնվել, որպեսզի լսես՝ ինչ է ասում ուսուցիչը/դաստիարակը:

Պաստառ 10, նկար 37ա

Մխալ վարք: Երկրաշարժից հետո պետք է բղավելով և մյուսներին հրելով փախչել, թեկուզև վնասելով ընկերոջը:

Պաստառ 10, նկար 38

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, երբ արդեն անվտանգ է, չի կարելի վերադառնալ շենք, քանի դեռ մեծերը չեն ասել, որ վերադառնալն անվտանգ է:

Պաստառ 10, նկար 38ա

Մխալ վարք: Երկրաշարժից հետո, երբ արդեն անվտանգ է, կարելի է վերադառնալ շենք, բերելու սիրելի խաղալիքը կամ անհրաժեշտ իրերը:

Պաստառ 10, նկար 39

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, երբ մեծերը թույլատրեն մտնել շենք, ապա պետք է լինել շատ զգույշ և հեռու մնալ պատերից:

Պաստառ 10, նկար 39ա

Մխալ վարք: Երկրաշարժից հետո, եթե մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, վազելով կարելի է մտնել և սովորականի պես ցանկացած պատի մոտով անցնել:

Պաստառ 10, նկար 40

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, երբ մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, պետք է լինել շատ զգույշ, լուցկի, մոմ կամ գազօջախը չպետք է վառել, չպետք է միացնել նաև լույսը: Հնարավոր է վնասված լինեն գազի խողովակները, արտահոսք լինի, իսկ էլեկտրական լարերը վնասված լինեն, որոնցից էլ կարող է կայծ բռնկվել և հրդեհ սկսվել:

Պաստառ 10, նկար 40ա

Մխալ վարք: Երկրաշարժից հետո, եթե մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, վազելով կարելի է մտնել, վառել լուցկի, մոմ, լույսը և գազօջախը:

Պաստառ 10, նկար 41

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, եթե մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, պետք է լինել շատ զգույշ, օգտագործել միայն լապտերիկ՝ անհրաժեշտ իրերը գտնելու համար:

Պաստառ 10, նկար 41ա

Միսալ վարք: Երկրաշարժից հետո, եթե մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, ապա իրերը գտնելու համար կարելի է լույս, լուցկի կամ մոմ վառել:

Պաստառ 10, նկար 42

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, եթե մեծերը թույլատրեն մենակ մտնել շենք, պետք է լինել շատ զգույշ, իրերը գտնելու համար պետք է զգուշությամբ բացել պահարանը, որ ներսի իրերը չթափվեն և չվնասեն բացողին:

Պաստառ 10, նկար 42ա

Միսալ վարք: Երկրաշարժից հետո կարելի է մենակ մտնել շենք, հնարավորինս արագ բացել պահարանը՝ անհրաժեշտ իրերը վերցնելու համար:

Պաստառ 10, նկար 43

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, ոչ մի տեղից ջուր չի կարելի խմել, քանի որ այն կարող է աղտոտված լինել: Միայն խանութից գնված ջուրը կարող է ապահով լինել:

Պաստառ 10, նկար 43ա

Միսալ վարք: Երկրաշարժից հետո ցանկացած տեղից կարելի է ջուր խմել՝ առանց մեծերին հարցնելու:

Պաստառ 10, նկար 44

Ճիշտ վարք: Երկրաշարժից հետո, առանց մեծերին հարցնելու, չի կարելի օգտագործել սանհանգույցը, քանի որ այն կարող է խափանված լինել և լրացուցիչ խնդիրներ առաջացնել, օրինակ՝ կարող է վարակներ տարածվել:

Պաստառ 10, նկար 44ա

Միսալ վարք: Երկրաշարժից հետո հանգիստ կարելի է օգտագործել սանհանգույցը՝ առանց մեծերին հարցնելու:

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը պատմում է **Երկրաշարժիկի** պարերից հետո ճիշտ և սխալ վարքի կանոնների մասին: Այնուհետև ցույց է տալիս ճիշտ և սխալ վարքի նկարները մեկ առ մեկ և երեխաներին հարցնում, թե ի՞նչ է պատկերված, կարելի՞ է այդպես վարվել, թե՞ ոչ, և ինչու: Ապա հարցնում երեխաներին. «Ի՞նչ եք կարծում, նկարը ո՞ր գրպանը պետք է դնել», որից հետո երեխաները ինքնուրույն կամ մանկավարժի օգնությամբ նկարները տեղադրում են **պաստառ 9-ի** համապատասխան գրպաններում:

Խաղ-փազլ. «Բարի կրակը և Չար կրակը»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ,
- պաստառ 11՝ **Հրդեհիկի** նկարը և պաստառ 12՝ **Բարի կրակի** և **Չար կրակի** համապատասխան նկարներ

Խաղի նպատակը: Երեխաները կտարբերակեն կրակի օգտակար և վտանգավոր հետևանքները:

Պաստառների բովանդակությունը: Պաստառ 11-ի կենտրոնում պատկերված է **Կրակե փորիկով մարդուկի՝ Հրդեհիկի** նկարը, որի երկու կողմերում կան նկարների համար նախատեսված գրառանքներ: Նկարների մի մասը կրակի օգտակարությունն են ցույց տալիս՝ **Բարի կրակը**, մյուս մասը՝ վտանգավոր հետևանքները **Չար կրակը:** (պաստառ 12)

Պաստառ 12, նկար 45

Բարի կրակ: Գազօջախին դրված է կաթսա, որի կողքին հեշտ այրվող ոչինչ չկա, այսինքն՝ ամեն ինչ անվտանգ է, ոչինչ չի նպաստի հրդեհի բռնկմանը: Մեր **Բարի կրակը** կօգնի, որ ճաշը շուտ եփվի:

Պաստառ 12, նկար 45ա

Չար կրակ: Գազօջախին դրված է կաթսա, կրակի մոտ սրբիչ է կախված: Սրբիչը սկսում է այրվել, և հրդեհ է բռնկվում: **Բարի կրակը** մեր սխալի պատճառով դարձավ **Չար կրակ** ու հրդեհ բռնկվեց:

Պաստառ 12, նկար 46

Բարի կրակ: Գազօջախը մայրիկն է վառում, քանի որ նա գիտի ճիշտ վառելու ձևը: **Բարի կրակը** օգնում է, որ մայրիկը համեղ կարկանդակներ պատրաստի մեզ համար:

Պաստառ 12, նկար 46ա

Չար կրակ: Հետաքրքրասեր երեխան փորձում է վառել գազօջախը և վառում է մատը: Նա շփոթվում է ու վառված լուցկին զցում հատակին. հրդեհ է բռնկվում: Այս անգամ էլ **Բարի կրակը** սխալ օգտագործեցինք, և այն, կարկանդակներ պատրաստելու փոխարեն, հրդեհ դարձավ:

Պաստառ 12, նկար 47

Բարի կրակ: Երեխաները գնացել են անտառ եքսկուրսիայի: Մեծահասակները կրակ են վառում, և **Բարի կրակն** օգնում է, որ նրանք համեղ ուտելիք պատրաստեն:

Պաստառ 12, նկար 47ա

Չար կրակ: Անտառում լավ ժամանակ անցկացնելուց հետո, հեռանալիս, մեծահասակները մոռացան հանգցնել կրակը, և **Բարի կրակը** դարձավ **Չար կրակ** և այրեց անտառի ծառերը:

Պաստառ 12, նկար 48

Բարի կրակ: Երեխան փորձում է խարույկ վառել, **Բարի կրակը** տեսնում է, որ նա այդ անում է մեծահասակի ներկայությամբ ու ճիշտ, ու խարույկը վառվում է:

Պաստատ 12, նկար 48ա

Չար կրակ: Երեխան որոշում է ինքնուրույն, առանց մեծահասակի օգնության, խարույկ վառել: Դրա հետևանքով **Բարի կրակը** դառնում է **Չար կրակ**, քանի որ երեխան դա անում է սխալ, ինչը պատճառ է դառնում, որ այրվեն և՛ իր հագուստները, և՛ հրդեհ բռնկվի:

Պաստատ 12, նկար 49

Բարի կրակ: Մեծահասակն արդուկը միացրել և արդուկ է անում: Նա շատ զգույշ է, որպեսզի հանկարծ հրդեհ չբռնկվի և **Չար կրակ** առաջանա:

Պաստատ 12, նկար 49ա

Չար կրակ: Երեխան առանց մեծերի հսկողության արդուկ է անում: Նա մոռանում ու արդուկը թողնում է հագուստի վրա: Նույն վայրկյանին **Բարի կրակը** դառնում է **Չար կրակ**, և հրդեհ է բռնկում, քանի որ երեխան չգիտի արդուկից օգտվել և առանց մեծերի հսկողության միացրել է այն:

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը պատմում է կրակի օգտակարության և նրա հետ սխալ վարվելու դեպքում հնարավոր հետևանքների մասին: Այնուհետև ցույց է տալիս **Բարի կրակի** և **Չար կրակի** նկարները և հարցնում, թե որ նկարն է ճիշտ, որը վտանգավոր, այնուհետև տեղադրում **պաստատ 11-ի** վրա համապատասխան տեղերում:

Խաղ- փազլ. «Ճիշտ և սխալ. ինչպես կանխել հրդեհի առաջացումը»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ
- պաստատ 13՝ **Հրդեհիկի** նկարը և պաստատ 14՝ հրդեհի կանխման ճիշտ և սխալ վարքի համապատասխան նկարները

Խաղի նպատակը: Սովորողները/երեխաները կիմանան ինչպես կանխել հրդեհի առաջացումը և համապատասխան վարք դրսևորել:

Պաստառների բովանդակությունը: **Պաստատ 13-ի** կենտրոնում պատկերված է արդեն մեզ ծանոթ **Հրդեհիկը**, որի երկու կողքերից կա փազլի մասերի համար նախատեսված գրպաններ՝ ճիշտ վարքի և սխալ վարքի համար, որոնք 5 զույգ են և **պաստատ 14-ի** նկարներն են:

Պաստատ 14, նկար 50

Ճիշտ վարք: Գազօջախին դրված կաթսայում ճաշ է եփվում: Գազօջախը միացրել ենք և ուշադիր հետևել, որ կրակի մոտ հեշտությամբ այրվող որևէ իր չլինի:

Պաստատ 14, նկար 50ա

Միայն վարք: Գազօջախին դրված կաթսայում ճաշ է եփվում: Մակայն ուշադիր չենք եղել և սրբիչը թողել ենք գազօջախի մոտ: Ինչը պատճառ է դարձել, որ հրդեհ բռնկվի:

Պաստատ 14, նկար 51

Ճիշտ վարք: Գազօջախի վերևի դարակում, երբեք չի կարելի պահել բռնկվող նյութ,

օրինակ՝ նավթ կամ բենզին:

Պաստառ 14, նկար 51ա

Մխալ վարք: Գազօջախի վերևի դարակում մեծերից մեկը նավթով լի շիշը է դրել ու մոռացել: Մի օր նա միացնում է գազօջախը և ինչ....նավթով լի շիշը պայթում է, և խոհանոցում հրդեհ է բռնկվում:

Պաստառ 14, նկար 52

Ճիշտ վարք: Բենզալցակայանում կամ գազալցակայանում մեծահասակները հեռու են գնում և նոր միայն լուցկի վառում, քանի որ բենզինը և գազը արագ բռնկվող նյութեր են:

Պաստառ 14, նկար 52ա

Մխալ վարք: Բենզալցակայանում կամ գազալցակայանում մեծահասակը լուցկի է վառել :

Պաստառ 14, նկար 53

Ճիշտ վարք: Մի շենքում հրդեհ է բռնկվել: Փոքրիկները, չնայած նրանց համար շատ հետաքրքիր է, չպետք է գնան այնտեղ, որտեղ հրդեհ է, քանի որ կարող է այրվածքներ ստանան կամ այրվող շենքի ծխից վնասեն առողջությունը:

Պաստառ 14, նկար 53ա

Մխալ վարք: Մի շենքում հրդեհ է բռնկվել: Երեխաները վազում են, շտապում են տեսնել՝ ինչ է եղել, նրանց շատ հետաքրքիր է:

Պաստառ 14, նկար 54

Ճիշտ վարք: Երբեք այրվող որևէ առարկա, օրինակ՝ լուցկի, թուղթ չի կարելի նետել աղբամանը: Աղբամանի մեջ եղած թղթերը արագ կբռնկվեն, և հրդեհ կսկսվի:

Պաստառ 14, նկար 54ա

Մխալ վարք: Երեխան վառված լուցկին նետել է աղբամանը, քանի դեռ մեծերից ոչ ոք չի տեսել, թե ինչպես է նա առանց հարցնելու դրանով խաղացել:

Խաղի ընթացքը: Պաստառները պատրաստելուց հետո մանկավարժը/դաստիարակը պատմում է հրդեհի առաջացումը կանխելու ճիշտ և սխալ վարքի կանոնների մասին: Ապա, ցույց տալով ճիշտ և սխալ վարքի նկարները մեկ առ մեկ, երեխաներին հարցնում է, թե ինչ է պատկերված, կարելի՞ է այդպես վարվել, թե՞ ոչ, և ինչու: Որից հետո երեխաներին հարցնում է. «Ինչ եք կարծում, նկարը ո՞ր գրպանը պետք է դնել»: Այդ ամենից հետո երեխաները ինքնուրույն կամ մանկավարժի/դաստիարակի օգնությամբ նկարները տեղադրում են **Պաստառ 14-ի** համապատասխան գրպաններում:

Խաղ - փազլ «Ճիշտ և սխալ. ինչ անել հրդեհի ժամանակ»

Անհրաժեշտ նյութեր

- մկրատ
- պաստառ 15՝ **Հրդեհիկի** նկարը, պաստառ 16՝ հրդեհի ժամանակ ճիշտ և սխալ վարքի կանոնների անհրաժեշտ նկարները

Խաղի նպատակը: Սովորողները/երեխաները կիմանան ինչպես պետք է վարվել հրդեհի ժամանակ և ինչից է պետք խուսափել:

Պաստառների բովանդակությունը: **Պաստառ 15-ի** կենտրոնում պատկերված է արդեն մեզ ծանոթ **Հրդեհիկը**, որի երկու կողմերում կան 10 զույգ նկարների համար նախատեսված գրպաններ (**պաստառ 16**):

Պաստառ 16, նկար 55

Ճիշտ վարք: Տանը հրդեհ է բռնկվել: Երեխան անմիջապես զանգահարում է 1-01/911 հեռախոսահամարին և ասում տան հասցեն, որ հրշեջները արագ հասնեն և կրակը հանգցնեն:

Պաստառ 16, նկար 55ա

Մխալ վարք: Տանը հրդեհ է բռնկվել: Երեխան, առանց մեծահասակին տեղյակ պահելու և 1-01/911 զանգահարելու, փորձում է ինքնուրույն հանգցնել կրակը:

Պաստառ 16, նկար 56

Ճիշտ վարք: Գազօջախի մոտ մնացած սրբիչը սկսել է այրվել: Անմիջապես պետք է անջատել գազօջախը, համոզվել, որ կրակ չկա, նոր միայն այրվող սրբիչի վրա ջուր լցնել:

Պաստառ 16, նկար 56ա

Մխալ վարք: Գազօջախի մոտ մնացած սրբիչը սկսել է այրվել: Առանց գազօջախը անջատելու՝ պետք է ջուր լցնել սրբիչի վրա:

Պաստառ 16, նկար 57

Ճիշտ վարք: Նավթի վառարանից նավթը դուրս է թափվել, և անգգուշաբար լուցկի վառելու պատճառով հրդեհ է բռնկվել: Այն չի կարելի հանգցնել ջրով, այն պետք է հանգցնել ծաղկամանի հողով կամ լվացքի փոշիով:

Պաստառ 16, նկար 57ա

Մխալ վարք: Նավթի վառարանից նավթը դուրս է թափվել, և անգգուշաբար լուցկի վառելու պատճառով հրդեհ է բռնկվել: Հանգցնելու համար ջուր է լցվում, սակայն կրակն ավելի է տարածվում:

Պաստառ 16, նկար 58

Ճիշտ վարք: Գազօջախի վրա դրված թավան, որի մեջ յուղ կամ ձիթայուղ կա, սկսել է այրվել, և ծխի ամպը պատել է ողջ խոհանոցը: Անմիջապես պետք է անջատել գազօջախը, կափարիչով փակել թավան և փորձել բացել պատուհանները: Ոչ մի դեպքում ջուր չի կարելի լցնել, քանի որ ջուրը կսկսի եռալ և այրվող ձեթի կամ յուղի գոլորշու հետ կայրի ձեռքերդ:

Պատասխան 16, նկար 58ա

Միալ վարք: Գազօջախի վրա դրված թավան, որի մեջ յուղ կամ ձիթայուղ կա, սկսել է այրվել, և ծխի ամպը պատել է ողջ խոհանոցը: Մեծահասակը թավայի մեջ արագ ջուր է լցնում և այրում դեմքն ու ձեռքերը:

Պատասխան 16, նկար 59

Ճիշտ վարք: Հրդեհ է սկսվել, և տունը լցվել է ծխով: Երեխան անմիջապես և շատ արագ հեռանում է բնակարանից՝ հետևից փակելով բոլոր դռները:

Պատասխան 16, նկար 59ա

Միալ վարք: Հրդեհ է սկսվել, և տունը լցվել է ծխով: Երեխան բաց է անում պատուհանները և հնարավոր բոլոր դռները, որ ծուխը արագ դուրս գա: Սակայն դրա հետևանքով հրդեհն ավելի է սաստկանում:

Պատասխան 16, նկար 60

Ճիշտ վարք: Հրդեհ է սկսվել, և տունն ամբողջությամբ ծուխ է լցվել: Երեխան ստիպված է անցնել այդ ծխի միջով տնից դուրս գալու համար: Նախ և առաջ նա որևէ կտորով փակում է քիթն ու բերանը, ապա նոր անցնում ծխի միջով: Հակառակ դեպքում նա կվնասի իր շնչուղիները:

Պատասխան 16, նկար 60ա

Միալ վարք: Հրդեհ է սկսվել, և տունը ամբողջությամբ ծուխ է լցվել: Երեխան շտապ վազում է դուրս ծխի միջով՝ առանց փակելու քիթն ու բերանը:

Պատասխան 16, նկար 61

